# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**12 նոյեմբերի 2012 թվականի N 471-Ա**

**ք. Հրազդան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Բ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 219[1]-րդ և 43.1-րդ հոդվածների և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2009 թվականի մարտի 20- ի N 33 կարգադրությամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից 2012 թվականի նոյեմբերի 8- ի կազմած թիվ 1 արձանագրությունը՝ **որոշում եմ .**

1. Աղբահանության աշխատանքները ժամանակին չկազմակերպելու համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ գյուղական համայնքի ղեկավար Բադալ Սարգսյանի նկատմամբ նշանակել տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Միեր Եղիազարյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ